

Միհրան Գալստյան

Աշխատանքային միգրացիայի սոցիալ-տնտեսական և մշակութային հետևանքների գնահատում

Հետազոտության արդյունքներով աշխատանքային միգրացիան բացասական ազդեցություն է ունենում հանրապետության ժողովրդագրական իրավիճակի վրա նրա սեռատարիքային կազմում առաջ բերելով անհամաձայնություն: Ընտանիքի մակարդակով գնահատելով միգրացիայի ունեցած ազդեցության խնդիրը՝ հարցվածների շուրջ 61.9%-ը նշել է, որ աշխատանքային միգրացիան ազդում է ընտանիքներում երեխաների թվաքանակի աճի վրա և նպաստում ընտանիքի չափերի փոքրացմանը: Աշխատանքային միգրացիան հաճախ ուղեկցվում է մշտական բնակավայրի փոփոխությամբ, ինչը հիմք է հանդիսանում համայնքային բնակչության ծերացմանը: Համայնքի մակարդակով ծերերի թվաքանակի ավելացումը և աշխատանքային տարիքի բնակչության թվաքանակի կրճատումը ոչ միայն էական ազդեցություն են ունենում նրա սեռատարիքային կազմի և համայնքի սոցիալ-ժողովրդագրական կառուցվածքի, այլև նրանում իրականացվող ծրագրերի արդյունավետության վրա: Համայնքների ծերացման խնդիրը առավել սուր ձևով է դրսևորվում Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում, որոնք գնալով զրկվում են երիտասարդ և աշխատունակ բնակչությունից:

Հանրապետական մակարդակով, փաստորեն, այդ աշխատուժը չի մասնակցում իր երկրի ՀՆԱ-ի ստեղծմանը: Նա այն ստեղծում է երկրի սահմաններից դուրս և չի մասնակցում ազգային տնտեսության զարգացման խնդիրներին:

Աշխատանքային միգրացիան հիմք է հանդիսանում մշտական բնակավայրի փոփոխության համար միգրացիոն դիրքորոշումների ձևավորմանը: «Կցանկանայի՞ք ընտանիքով տեղափոխվել և մշտական բնակչություն հաստատել այն բնակավայրում, որտեղ Դուք կամ Ձեր ընտանիքի անդամները երկար տարիներ մեկնում են արտագնա աշխատանքի» հարցին պատասխանողների 25.8%-ը տվել է դրական, իսկ 74.2%-ը՝ բացասական պատասխան: Սա նշանակում է, որ առաջիկայում միգրանտների շուրջ մեկ քառորդ ընտանիքներ ցանկություն են հայտնել տեղափոխվել և մշտական բնակություն հաստատել մուտքի երկրներում կամ վերամիավորվել իրենց ընտանիքներին:

Ընտանիքում և համայնքում ժողովրդագրական իրավիճակի վատթարացման խնդիրների շարքին է դասվում աշխատանքային միգրացիայի հետևանքով ամուսնությունների թվաքանակի աճի կրճատումը: Այդ տեսակետից հարցվածների 61.9%-ը գտել է, որ աշխատանքային միգրացիան բացասական ազդեցություն է ունենում ամուսնությունների թվաքանակի վրա:

Աշխատանքային միգրացիան լուրջ մարտահրավեր է նետել հայ ընտանիքի ամրությանը, քանի որ աշխատանքային միգրացիայի հետևանքով տնտեսության գլխավորը տարվա մեծ մասը գտնվում է ընտանիքից դուրս՝ այլէթնիկ միջավայրում, ինչը թուլացնում է շփումները և փոխհարաբերությունները ընտանիքի մյուս անդամների հետ: Ընտանիքի անդամների միջև ժամանակավոր բաժանումը բարձրացնում է ամուսնալուծվելու ռիսկայնության աստիճանը: Միգրանտի երկարատև բացակայությունը առաջ է բերում բարոյական և հոգեբանական մի շարք լուրջ հիմնախնդիրներ: Դրա հետևանքով համայնքներում հետզհետե աճել է ամուսնալուծությունների և անկայուն և լքված ընտանիքների թվաքանակը: Թերևս նշված հանգամանքներով կարող ենք բացատրել հարցվածների 65.8%-ի կողմից տրված այն գնահատականը, որ աշխատանքային միգրացիան նպաստում է ընտանիքների ամուսնալուծությունների աճին: Աշխատանքային միգրանտների որոշ մասի շրջանում, բացի տեղում օրինական ընտանիքից, մուտքի երկրներում լայն տարածում են գտնում արտամուսնական կապերը, երկրորդ ընտանիք ունենալու երևույթը: Ելնելով այն հանգամանքից, որ միգրանտները համարվում են ընտանիքին նյութական միջոցներով հիմնական ապահովողը, նրանց կողմից ցուցաբերված այդ վարքագիծը հաճախ հանդուրժվում է ընտանիքի մյուս անդամների կողմից: Գյուղական համայնքներում դեռևս ամուր կերպով պահպանվող ազգային ավանդույթների և հասարակական կարծիքի ազդեցությամբ այդ ամուսնալուծությունները դեռևս չեն ստանում պաշտոնական ձևակերպում: Օրինակ, Գեղարքունիքի մարզի Ծակքար գյուղում հաշվվում է շուրջ 10 նման, իսկ Սարուխան գյուղում յուրաքանչյուր տարի միջին հաշվով 1-3 նման դեպք:

Միգրանտի բացակայության ժամանակ տնային տնտեսության ողջ աշխատանքները առաջին հերթին ընկնում են կանանց, տարեցների և անչափահաս երեխաների ուսերին: Պայմանավորված այդ հանգամանքով՝ կանանց շրջանում տեղի է ունեցել ավանդական մի շարք կարգավիճակների և դերերի փոփոխություն: Կանայք ընտանիքում նախկինում հիմնականում զբաղվում էին կենցաղի և

երեխաների դաստիարակության խնդիրներով: Ներկա պայմաններում կանայք ընտանիքից դուրս կատարում են իրենց վերապահված և չվերապահված մի շարք ֆունկցիաներ, և մեծացել է նրանց տնտեսական ակտիվությունը: Գյուղատնտեսական աշխատանքները, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությունը, կաթնամթերքների վերամշակում, և որոշ դեպքերում նաև դրանց իրացումը կատարում են կանայք: Տան գլխավորի բացակայության ընթացքում նրանք մասնակցում են նաև համայնքի հասարակական կյանքին և կարևոր միջոցառումներին, համայնքում տեղի ունեցող հարսանեկան և թաղման ծեսերին, շփվում տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Հարցման մասնակիցների 85%-ի կարծիքով ամենաուժեղ բացասական ազդեցությունը այն ունենում է միգրանտի առողջական վիճակի վրա: Մուտքի երկրներում առանց հանգստյան օրերի երկարատև և ծանր ֆիզիկական աշխատանքի, ոչ նորմալ սննդի և կենցաղային վատ պայմանների առկայության հետևանքով նրանք ձեռք են բերում մի շարք հիվանդություններ:

Աշխատանքային միգրացիան բացասական ազդեցություն է ունենում նաև այն առումով, որ նրանց շրջանում տարեցտարի աճում է «դժբախտ պատահարների» թվաքանակը: Այդ տեսակետը իշխում է հարցվածների 72.6%-ի շրջանում: Հատկապես շինարարության ոլորտում «դժբախտ պատահարների» հետևանքով միգրանտները հաճախ ոչ միայն ստանում են տրավմաներ, դառնում են հաշմանդամ, այլև այն ավարտվում է մահվան դեպքերով: «Դժբախտ պատահար» է որակվում նաև ազգամիջյան հողի, հանցագործ մոտիվներով տեղի ունեցող սպանությունները: Մուտքի երկրներում անօրինական կարգավիճակի, իրավական անպաշտպանվածության հետևանքով հաճախ այդ դեպքերին անհրաժեշտ ընթացք չի տրվում: Օրինակ, Վայոց ձորի մարզի Գլաձոր գյուղից 2005թ. ընթացքում արտագնա աշխատանքի վայրում մահացել է 7, իսկ Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղից՝ 6 մարդ, իսկ 1998թ.-ից՝ շուրջ 60 նման դեպք: Այդ մարդկանց միջին տարիքը տատանվում էր 25-ից 40 տարեկան:

Հայաստանի Հանրապետության համար աշխատանքային միգրացիայի բացասական դրսևորումներից նաև կարելի է համարել աշխատանքային շահագործման և թրաֆիքինգի երևույթը: Այդ երևույթի մասին հարցվածները պատմել են իրական դեպքեր, երբ ուժի, սպառնալիքի և հարկադրանքի

գործադրմամբ միգրանտները աշխատել են վաղ առավոտից մինչև ուշ գիշեր, և սահմանափակվել են նրանց տեղաշարժերը, բայց դրա դիմաց նրանց չեն վճարել:

360 հարցվողներից 14-ը (26%) իրենց համայնքում մտաբերել են աշխատանքային շահագործման դեպքեր, որոնք տեղի են ունեցել նրանց ընկերների, ծանոթների, հարազատների և բարեկամների հետ: Անշուշտ, նշված դեպքերը հարցվածների շրջանում կարող են կրկնվել, քանի որ խոսքը կարող է գնալ միևնույն դեպքի մասին և լինել ոչ ամբողջական: Բայց նաև չպետք է մոռանալ, որ այդ դեպքերի մասին պատմել են այն հարցորդները, որոնց ընտանիքի անդամները տարիներ շարունակ մեկնել են աշխատանքային միգրացիայի: Աշխատանքային միգրացիայի ժամանակ միգրանտի անօրինական կարգավիճակը կարող է բարձրացնել թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկայնությունը:

Աշխատանքային միգրացիայի հետևանքով այլէթնիկ միջավայրում տեղի բնակչության և արտագնացների միջև շփումները նպաստում են նրանց սոցիալ-մշակութային փոխառնչություններին, մասնավորապես նրանց օտար լեզվի իմացությանը: Այլէթնիկ միջավայրում ակտիվ միջանձային շփումները կարևոր պայման են նաև ազգային ստերեոտիպերի փոփոխությանը, որը ազդում է նրանց արժեքային կողմնորոշումների և աշխարհայացքի ձևավորման վրա: Միգրանտների հետ իրականացրած հարցումներից պարզվեց, որ նրանց շրջանում բարձր է քննադատական վերաբերմունքը ոչ միայն օտար, այլև սեփական միջավայրի նկատմամբ, և էթնիկական ինքնագնահատման փաստը դառնում է առավել հավաստի և բովանդակալի: Էթնիկական այն ստերեոտիպերը, որոնք կապված են ավանդական մշակութային արժեքների հետ, միջանձային շփումների ժամանակ միգրանտների մոտ ենթարկվում են որոշակի փոփոխությունների: Ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այն ազդում է նաև հոգևոր և նյութական մշակույթի մի շարք բնագավառների վրա:

Աշխատանքային միգրացիայի հետևանքով նրանց երեխաների մեծ մասը այդ երկներում ստանում է նաև բարձրագույն կրթություն: Այսպես, Վայոց ձորի մարզի Գլաձոր գյուղից Մոսկվայի բուհերում սովորում են շուրջ 15, իսկ Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղից՝ Նիժնի Նովգորոդ, Չեյաբինսկ, Սարատով, Օրսկ, Կեմերովո քաղաքներում շուրջ 30 երիտասարդներ: Նման ընտանիքները տազնապով են մոտենում նաև իրենց երեխաների մայրենի լեզվի, հայեցի դաստիարակության և էթնիկ ինքնագիտակցության կորստի խնդիրներին:

Հարցումները ցույց տվեցին, որ նրանք ազգամիջյան խառնամուսնությունների նկատմամբ չունեն դրական դիրքորոշում և ելնելով ազգային սովորույթներից և լեզվական գործոնից՝ նախապատվությունը տալիս են մոնոէթնիկ ամուսնություններին: Այնուհանդերձ, այդ շփումները նպաստում են ազգամիջյան խառնամուսնությունների տարածմանը, որը, սակայն, նրանց շրջանում չի կազմում բարձր տոկոս: Հետազոտության ընտրանքում ընդգրկված 12 համայնքներում 1994թ. հետո գրանցվել է ազգամիջյան ամուսնությունների 5 դեպք: Ամուսնանալուց հետո այդ երիտասարդները բնակություն են հաստատել ոչ թե հայրենի գյուղում, ինչպես նախկինում էր, այլ գրանցվում և բնակություն են հաստատում կնոջ բնակավայրում: Եթե ազգամիջյան խառնամուսնությունների ժամանակ տղաների խնդրում հաճախ նրանց ընտանիքը ցուցաբերվում է որոշ հանդուրժողականություն, ապա աղջիկների հարցում այն բացառվում է, նույնիսկ եթե նրանք ընտանիքով գտվում են հանրապետությունից դուրս:

Աշխատանքային միգրացիայի հետևանքով միգրանտների որոշ մասը, ովքեր տարիների ընթացքում ձեռք են բերում մեծ կարողություններ, իրենց դրական նպաստն են բերում գյուղական համայնքների զարգացման գործում, հաճախ զբաղվում են նաև բարեգործությամբ: Այսպես, Ռուսաստանի Դաշնությունում գտնվող հարուստ համագյուղացիները ֆինանսավորել են Վայոց ձորի մարզի Գլաձոր գյուղի 3 կմ խմելու ջրի խողովակները վերանորոգելու համար: Գեղարքունիքի մարզի Ծակքար գյուղի վերին և ներքին թաղամասերում խմելու ջրի խողովակներ անցկացնելու համար նրանք հատկացրել են 8000 ԱՄՆ դոլար, իսկ դպրոցին պիտույքներ գնելու համար՝ 132 հազար դրամ: Շիրակի մարզի Ազատան գյուղի արտագնացները գյուղի զարգացման հիմնադրամին նվիրել են 36մլն դրամ:

Արտագնացությունը ազդում է նաև գյուղի բարեկեցության մակարդակի վրա: Արտագնա աշխատանքով զբաղվող գյուղերը, համեմատած ոչ արտագնա գյուղերի հետ, աչքի են ընկնում արտաքին բարվոք տեսքով, գերակշռում են տուֆակերտ երկհարկանի շենքերը: